

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1955 ԱՊՐԻԼ - ՄԱՅԻՍ Թ. 4-5

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ	Էջ
ՏԵՐ ՆԵՐՍԵՍԻԱՆ Զ. Ն. - Մեր խորհուրդը	81
» » » - Մեր հաստատվելը	84
ՀՆԱԽՈՍՍԱԿԱՆ	
ԱԻԳԵՐ Հ. ՅՈՎՀԱՆ. - Ժամանակագրական հետազոտություն Ս. Գր. Լուսաուրջի խճանկարին	86
ԿՐԹՆԱԿԱՆ	
ՏԵՐ ՆԵՐՍԵՍԻԱՆ Զ. Ն. - Մեր նախնեաց հաւատքը Տերափոր Անարատ Յղութեան մասին. - Յաւելուած Բ.	93
*** - Յարութեան վկաները թրգմ. Հ. Ք. Չ.	115
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ	
ՔԻԻՐՏԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ. - Հայրապետ Վրդ. Ղուկ. Թեկցի և Ներսէս Եպիսկ. Բաղեշեցի (Կենսագրական ճշտումներ և յաւելումներ)	100
Muyldermans J. - Les manuscrits arméniens d'Évagre le Pontique à Jerusalem (շար. և վերջ)	108
ԳՐԱԿԱՆ	
ՏԱՊԱՂԵԱՆ Յ. - Տայիր	99
ԱԹՄԱՃԵԱՆ ՄԱՌԻ. - Ներշնչում	118
» » - Բոյրերու ստեղծարար	119
ՊՈՏԼԻՔ ՇԱՐԼ. - Մարդն ու ծովը (Թրգմ. Մանուկ Սեփակյան)	120
ԼԵԶՈՒԱԿԱՆ	
ՏԵՐ ՆԵՐՍԵՍԻԱՆ Զ. Ն. - Ի Սէր «Մեծասրան»-ին	121
ԳՐԱԽՈՍՍԱԿԱՆ	
ՏԵՐ ՆԵՐՍԵՍԻԱՆ Զ. Ն. - Բժ. Իսահակ Տէրափորեանի «Երկերի ժողովածու»-ն	123
» » » - Ծառուր Պէրպլեկեանի «Խաչին ճամբան»	124
ԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ	
ՏԵՐ ՆԵՐՍԵՍԻԱՆ Զ. Ն. - Լիբանանի Հանրապետության հաւաքած վսեմ. Գրաւիլ Շամուն Ս. Ղազարու մէջ (28 Մարտ 1955)	125

SOMMAIRE

1955 Avril-Mai N. 4-5

ARTICLE DE FOND	PAGE
<i>Der Nersessian P. N.</i> - Le mystère de Mekhitar	81
» » » - Nos martyrs	84
ARCHEOLOGIE	
<i>Aucher P. Jean.</i> - Recherche chronologique sur la figure de St. Gregoire Illuminateur à S. ^{te} Sophie	86
RELIGION	
<i>Der Nersessian P. N.</i> - La foi de nos ancêtres sur l'Immaculée Conception de la S. ^{te} Vierge. Appendice II.	93
*** - Les témoins de la Résurrection	115
PHILOLOGIE	
<i>Kurdian Haroutioun.</i> - Haïrabad de Ghulthig et l'Evêque Nersès de Baghesh (Correction biographiques et notes)	100
<i>Muyldermans J.</i> - Les manuscrits arméniens d'Évagre le Pontique à Jerusalem (suite et fin)	108
LITTERATURE	
<i>Dabaghian H.</i> - Désir	99
<i>Atmadjian Marie.</i> - Inspiration	118
» » - Gamme des aromes	119
<i>Baudelaire Charles</i> - L'homme et la mer (trad. par Marie Atmadjian)	120
LINGUISTIQUE	
<i>Der Nersessian P. N.</i> - Pour l'amour du Mezaskantch	121
RECENCIONS	
<i>Der Nersessian P. N.</i> - Oeuvres complètes du Mr. le doct. Isaac Terterian	123
» » » - «La route de la croix» du Dzadur Berberian	124
ECHO ARMENIEN	
<i>Der Nersessian P. N.</i> - S. E. Mr. le Président de la République Libanaise Doct. Camille Chamoun à St. Lazare (le 28 Mars 1955)	125

ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

1843 - 1955

ՃԺԳ. ՏԱՐԻ



ԱՊՐԻԼ - ՄԱՅԻՍ

ԹԻԻ 4-5

ՄԻԹԱՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Բնութեան զարթոնքի առաջին ծիլերուն հետ, ամեն տարի, մեր հոգիներուն մէջ ալ կը վերածննդի լուսաշող պատկեր մը, որ յաւերժօրէն կենսագործող՝ կ'առնիմք յաւերժ նորանոր սերունդները, վերածնունդի Արեգակին անբային տեսիլով:

Ապրիլեան խորհուրդն է այս, նուիրական յուշերով առցուն, որ Միթար Արքեպոս երջանիկ փոխման 206-րդ տարեդարձին առիթով (Ապրիլ 27), լոյսի հոգեբով բրբռացումի նման կը ծաւալի մեր էութեան խորը, զմայլանքի ու յարգանքի, մինչեւ անգամ՝ պաշտամունքի երախտագիտական իդմեր խելով մեր սրտերէն. նիշտ ինչպէս գերերկրային դիւցազ մը իր սիրագործութիւններու յիշատակով՝ ոգեւորիչ դիւքանք մը կ'ըլլայ դարերով սերունդներու, եւ ներշնչարան կեանքի զանազան արտայայտութեանց, կրօնական կամ մշակութային ասպարէզներու մէջ:

ԼՈՒՍԱՆՈՐՈՐԳ տիտղոսը, այդ դասականացած մակդիրը անմահ Սեբաստացիին, բոլոր այս խորհուրդին էութիւնը կը քանդակէ կարծէք կուօրէն: Ապրիլեան արեգակ մը, զուարթ ու ջերմին, զարմանային յոյսերով պատարուն, որ ցուրտ ձմեռէ մը վերջ՝ կը փայլի յանկարծ հայութեան երկնակամարին վրայ, փարատելու տգիտութեան ստուերներն ու բանձր ամպերը, մնացորդները երկարէ դարերուն:

Բայց մեզի կը բուրձի՝ թէ բան մը կը յաղաւենք Միթարի հոգիէն, էական տարր մը կը գեղջեմք անկէ՝ այդ տիտղոսին տակ: Այո՛, ԼՈՒՍԱՆՈՐՈՐԳը բիւրեղօրէն կը ցոլացնէ Միթարի բովանդակ գործունէութիւնը իր բոլոր երփներանգումով. պայծառ լուսասփիւռ մը հանդէպ իր համագրի եղբայրներուն:

չքնաղ պտուղն է լուսաւորութիւնը եւ վերածնունդը՝ նշմարտութեան ուղիներով: Միսիքարի դիմագիծը, ուրեմն, իր ամբողջութեան մէջ՝ սէր է եւ լոյս. նիշտ ինչպէս Աստուածաշնչական բացատրութեան համաձայն՝ ներեցէ՛ք համեմատութեանս՝ Արարչին էութիւնը սէր է եւ լոյս: Նոյնիման Աստուծոյ Որդին, աշխարհ գալով, ինքզինք լՈՅՍ անուանեց աշխարհի. եւ իր ծայրագոյն ՍԻՐՈՅՆ իբր հաւատի՛ք՝ ինքզինքը գոհեց, որպէսզի աստուածային կեանքը ծղի ու ծաղկի վերածնեալ մարդկութեան մէջ: Քրիստոնէական կեանքի սրբազնագոյն դէմքերն ալ եւ մեծագոյն հերոսները՝ հայրապետներ, մարտիրոսներ, հիմնադիրներ, կուսակներ՝ արդեօք չե՞ն պատկերացներ իրենց մէջ Աստուծոյ էութեան այս նշմարը, սէր եւ լոյս:

Միսիքար Աբբահօր մէջ եւս տեսնելով արարչական այդ սիրագեղ լոյսին մէկ նուիրական նշոյլը, կը համարինք գետնդած ըլլալ անմահ Սեբաստացիին շողշողուն դիմանկարը՝ իր արժանավայել շրջածիրին մէջ:

Երանի՛ք է՛ք ամէնք ալ, մինչ յարգանքով կը խոնարհինք Միսիքար Աբբահօր խնկելի անիւններուն առջեւ, լեցուէ՛նք երկնային այդ սիրոյն լուսաշող նախնայնեանով. ու բոլոր մեր ազգը, միասիրտ եւ միաձոյլ՝ իրականացնէր Միսիքարի գաղափարականը, կրօնական եւ ազգային գարբօնով մը, հայրենիքի եւ սփիւռքի մէջ:

Մ Ե Ր Ն Ա Շ Ա Տ Ա Կ Ն Ե Ր Ը Ղ

Ապրիլեան երկրորդ խորհուրդը, ընդհակառակն, խաւարի ու ատելութեան, մահուան ու ջարդի սոսկալի տեսիլով կը խռովէ մեր հոգիները. ցաւի, արցունքի ու սարսափի էջեր կը պարզէ մեր առջեւ, եւ ահաւոր բնաջնջումին յիշատակով՝ եթէ կարելի է յիշատակ անուանել՝ կը բանայ ահռելի պատկերը դժոխացած անապատներուն:

Արիւնտ ճմեռ մը՝ յուսալիք գարնան մէջ սեւ պատանքով կը ծածկէր մեր հայրենի երկրին լեռներն ու ձորերը, դաշտերն ու գետերը, որոնք բոլոր անմոռնչ ակնատեսներն եղան անկուր եղեռնին:

Մահուան գերանդին կ'իջնէր նաեւ Միսիքար Աբբահօր Տան վրայ, եւ Միսիքարեան գործունէութեան նակատին վրայ ոգորող ամենաբաշ մարտիկներէն չորս հոգի կ'իյնային՝ ի պաշտպանութիւն լուսաւորութեան սուրբ դատին:

Հ. Ստեփան վ. Սարեան Գաղատացի (ծն. 1865), Հ. Կարապետ Տէր Սահակեան Մշեցի (ծն. 1882), Հ. Թովմաս Օտապաշեան Տրապիզոնցի (ծն. 1886), նահատակուեցան Պոնտական հողին վրայ. իսկ Հ. Պօղոս Գասպարեան Մերտինցի (ծն. 1879), իր ծննդավայրի ժողովուրդին եւ եպիսկոպոսին հետ նահատակուած: Ամէնքն ալ կենսունակ եւ խոստումնալից ոյժեր Միաբանութեան համար, որոնց անունները արձանագրելու պահուն՝ արցունքով կը խոնարհինք անոնց անգերեզման անիւններուն առջեւ, եւ ողբի ու սուգի զգացումներով կը հայցենք անոնց երկնային միջնորդութիւնը ի փրկութիւն մեր վայրափախն ազգին:

Զեմք կարող անյիշատակ թողուլ նաեւ անունները անոնց, որոնք Միսիքարեան վարժարաններէն, յատկապէս Մուրատ-Ռափայէլեանէն շրջանաւարտ, գրիչը իրենց ձեռքին՝ ինկան վերելքի նամբուն վրայ: Ատոնց բոլորին խորհրդանիշ թող ըլլայ մեր յաւէտ ողբացեալ եւ սիրելի վարուժանը, իր նահատակակից արիւնի եղբայրներով:

Այսպէս Հայրերն իրենց որդիներուն հետ, վարդապետներն իրենց հարազատ աշակերտներով, փահանայ եւ ժողովուրդ աներկիւղ բարձրացան դէպի Գողգոթա, տօնելու իրենց ազգին Կարմիր Զատիկը...:

Բայց ո՞ր է մեր փառապանծ յարութիւնը: Հայագարմ քերթողուին՝ Վիկտորիա Աղանուր, մեր ազգային ահաւոր ողբերգութիւնը կուօրէն պատկերացնելով, իբրեւ մերօրեայ քրմուհի մը՝ կը պատգամէր բովանդակ Հայութեան. «ՔՈՒ ԱՆ ԶԱՏԻԿՆ ՄՕՏ Է»:

Վարդանանց նահատակութենէն 35 տարի չանցած՝ Հայաստան կը վերագտնէր իր անկախութիւնը կրօնապէս ու ֆաղափական գետնի վրայ, եւ Դուինն ամբողջ դրօշագարդ, Մանդակունի Հայրապետին հետ՝ փառքով եւ «ովսանա»ներով կ'ողջունէին Հայոց նոր մարգպանը՝ Վահան Մամիկոնեանի անձին մէջ:

Ինչո՞ւ չկրկնուի նոյն տեսարանը մեր օրերուն ալ. ահա արդէն փառասուն տարի է անցեր մեր ազգովին նահատակութեան վրայ, ուր ոչ լոկ 1036 մարտիրոս, այլ բիւրաւոր վկաներ՝ յաղթանակի արմաւենիով պսակուեցան:

Մարգարէ չեմք կարող ըլլալ, մանաւանդ ֆաղափական ներկայ պայմաններուն տակ, ուր յանկարծակի ամէն ինչ կրնայ կերպարանափոխուիլ եւ հիւլեական ոյժերու սպառնալիքին տակ՝ փայփայուիլ:

Բայց վստահութիւնն ունինք է՛ք պիտի չուշանայ վերականգնումի արշալոյսը, փարատելու համար մեր փառանամեայ սուգին տխուր գիշերը, որոնք ընթացին՝ կը սպառնին ազգին ոյժերը, սփիւռքի զանազան անկիւններուն մէջ, խարխալելով դէպի օտարացում:

Մեր նահատակութիւնը երաշխիքն է ինքնին մեր ազգովին ալ յարութեան. մարտիրոսներու արիւնը սերմն է կենդանարար եւ աներկբայ յոյսը մեր փրկութեան, մեր կրօնական ու ազգային վերելքին. միայն է՛ք գիտնանք մենք արժանի հետեւորդներն ըլլալ մեր նախնիներուն անդրդուելի հաւատին, մեր պապերու ջերմ հայրենասիրութեան. ամուր կառչինք մեր հայրենի աւանդութիւններուն, մանաւանդ սիրենք՝ զիրար անկեղծօրէն՝ առանց կուսակցական եւ յարանուանական փնտրանքներու, ու միացած եղբայրութեան սուրբ դրօշին տակ՝ Հայրենիք եւ Սփիւռք՝ Ապրիլեան գարունին հետ ողջունենք նաեւ մեր ցեղին մշտնորոգ յարութիւնը:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ

